

«ՏՈՒՆ» ՎԵՐՋԵԱՐԱՐԱԴՐԻԶՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դ. Ս. ԳՅՈՒՐԶՆՅԱՆ

Հայերենի տունը վերջնաբաղադրիչ ունեցող բարդ բառերի անգամ հպանցիկ համեմատությունը ցույց է տալիս, որ ձևավորվել է համադրական բարդության մի տեսակ (պայմանականորեն անվանենք Ա (առաջին բաղադրիչ) + տուն), որի հիման վրա ստեղծված բառեր կան վկայված հայերեն դեռևս առաջին գրավոր հուշարձաններում: Օրինակներ՝ ներհնատունս եւ միջնատունս եւ վերնատունս գործեսցես ի նմա (Մնն., 538): Աւերեալ էր և նորագկրակատուն մի (Եղ., 129): Ի շէնս և ի գեղս ... էին շինեալ ատարատունք, հիւանդանոցք (Բուղ., 194): Եւ որ, ասեն, ի կշոոց աստեղատանն ծնանի, արդար լինելոց է (Վեցօր., 188) և այլն:

«Ա+տուն» կադակարով, ըստ մեր հաշվումների, կազմվել են երկու հարյուր յոթանասունից ավելի հայերեն բառեր¹, որոնց կառուցվածքային և իմաստային քննությանն է նվիրված սույն աշխատանքը:

Որպես կանոն, բարդության երկու եզրերը կապակցվում են ա հոդակապով, ինչպես՝ գրատուն, գործատուն, զինատուն, հյուրատուն, մաքատուն, պանակատուն, վերնատուն, դեղատուն և այլն:

Գինետուն, այգետուն, հոգետուն, փռչետուն, հորետուն, օղետուն բառերում օրինաչափորեն հանդես է գալիս ն-ն (<ի+ա): Երկու բառ հանդիպում են ա/ե (է) տարբերակներով՝ աղավնատուն/արևատ. աղաւնէտուն, հաւսնատուն/հաւսսնտուն:

Կան նաև բառեր, որոնց բաղադրիչներն ուղղակի կցվել են իրար առանց հոդակապի՝ հավատուն, կախտուն (կախքարի տուն), աթոռտուն, առաջտուն, հաւամտուն, մկնտուն, փռնդտուն, փեսատուն, աղատուն, բանտուն, հովտուն (ՄՄ, 125), կամուրջտուն, իաւրգնտուն, երեխատուն, բովտուն, բազադտուն, գորտուն, ուժտուն, ռադիոտուն (հմտ. խոսկց. կինոտուն):

Նկատելի է, որ հոդակապով տարբերակները գրական կազմություններ են, ստեղծվել են նման բառերի օրինակով, իսկ երկրորդները հատուկ են ժողովրդական լեզվին, բարբառներին (բացառությամբ ռադիոտուն բառի), անցել են հատկապես միջին հայերենի շրջանից, որտեղ հոդակապի բացակայությունը սովորական երևույթ է:

Մի քանի բառեր հանդես են գալիս տարբերակներով՝ հոդակապով և անհոդակապով Այդ կարգի բառերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) հոդակապի առկայությունը բառիմաստի վրա չի ազդում, այսինքն՝ ունենք գրական-խոսակցական տարբերակներ՝ ժամատուն/ժամտուն «1. եկեղեցի, 2. եկեղեցուն կից շինված բնակելի շենք», ալրատուն/ալրտուն «աղացաքարի

¹ Բառացանկը կազմել, իմաստները ոտուգել ենք հիմնականում ըստ հետևյալ բառարանների՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան. Նոր բառգիրք հայկազնան լեզուի. հ. Ա—Բ, Վենետիկ, 1836—1837: Ռ. Ս. Ղազարյան, Հ. Ս. Ավետիսյան. Միջին հայերենի բառարան. հ. Ա, Երևան, 1987: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. 1—4, Երևան, 1969—1980 (ԺՀԲԲ): Հ. Բարսեղյան. Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան. Երևան, 1973: Ա. Տեր-Խաչատուրյան, Հ. Գանգրուենի, Փ. Կ. Տոնիկյան. Հայոց լեզվի նոր բառարան. Պետրոք, 1968: Է. Բ. Ազարյան. Արդի հայերենի բացատրական բառարան. Երևան, 1976: Ա. Սուքիասյան. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967 (հիշյալ բառարաններում չվկայված բառերի սկզբնաղբյուրը կնշվի):

առջև եղած տախտակն գուռ, որի մեջ թափվում է աղացված ալյուրը», թուփատուն/թոփատուն «թոքախորշ», թոնրատուն/թոն/տրտուն «հացատուն», տրև-տաւաւ տւտւտաւաւ «1. տեղ՝ սենյակ, որտեղ տան տնտեսական գործերն են կատարվում, 2. մեքերանոց» և բ) հողակապով և անհողակապ նույնաբաղադրիչ բառերում տեղի է ունեցած լինում իմաստների տարբերակում: Այսպես՝ կրակատուն «կրակապաշտների ատրուշան, որտեղ անշեջ պահվում էր սուրբ կրակը», «կրակ վառելու տեղ, թոնրատուն» և կրակտուն, որը գործածվում է միայն երկրորդ նշանակությամբ (հատուկ է արևմտահայ բարբառներին), ջրատուն «ջրամբար, ջրահավաք տեղ», «ջրաղացի ստորին հարկը, ուր ջուրը քարերը դարձնելով դուրս է հոսում» և ջրտուն՝ կրկին միայն վերջին իմաստով:

Հետաքրքրական են խաղատուն «հատուկ շենք կամ սենյակ, որտեղ դրամով մոլեխաղեր են խաղում» և խաղտուն (բրբ.) «գյուղական մեծ տուն, որտեղ հարսանիքներին շուրջպար են բռնում» բառերը, որոնց առաջին բաղադրիչը՝ խաղ(ալ), հանդես է եկել տարբեր՝ «մոլեխաղ» և «տար» իմաստներով:

«Ա+տուն» կաղապարով կազմված բարդությունների առաջին եզրը կազմաբյուրեղացում է՝

ա) պարզ՝ դեղ-, գրավ-, դրամ-, պար-, ման-, զին-, հուշ- և այլն,

բ) ածանցավոր՝ լվացք-², գանգակ-, վար(ի)չ-, վեր(ի)ն-, կայաբան-, ոսկեր(ի)չ- և այլն,

գ) բարդ՝ իմբագ(ի)ր-, ձեռագ(ի)ր-, վիմագ(ի)ր- և այլն,

դ) բարդ ածանցավոր՝ լուսանկար(ի)չ-, կառավար(ի)չ- և այլն:

Որոշ դեպքերում առաջին բաղադրիչը հանդես է գալիս երկու տարբերակով՝ պարզ և ածանցավոր, ինչպես՝ սափրաան և սափրատուն, դպրատուն և դպրոցատուն, հմմտ. նաև կաթսայատուն-շոգեկաթսայատուն (ՂՇ, 179), լուսանկարատուն-էլեկտրա~, լվացատուն-շոգե~:

Հողակապից առաջ ընկած բաղադրիչը շնայած կազմության լինում է նաև բաղադրյալ (այդ թվում՝ բարդ), այնուամենայնիվ մենք այն դիտում ենք իբրև մեկ միավոր, որովհետև բարդության անմիջական կազմիչները երկուսն են, օրինակ՝ հեռագրատուն=հեռագիր+տուն, գառնջրատուն=գառնջուր+տուն և այլն: Սա օրինակաբան է հայերենի երեք և ավելի բաղադրիչ ունեցող բարդությունների համար:

Հետևաբար՝ այս կաղապարի համար մենք հստակ ընդունում ենք երկու կազմիչ մաս, եզր, որպես բարդության անմիջական կազմիչ:

Առաջին բաղադրիչը լինում է հնչյունափոխված (սրբ-, մեղվ-, սրհ-, գետն-, մոխր- և այլն) և անհնչյունափոխ (բրբ. կամուրջտուն):

Այդ բաղադրիչը, որպես կանոն, լինում է հայերեն բառ. միայն որոշ դեպքերում ենք հանդիպում փոխառությունների, օրինակ՝ ռադիոտուն (<լատ. radio «ձառագայթների արձակել»)³, արևմտ. ալֆալատուն (<արաբ. ալ-բուհի «նուրբ փող»⁴, արևել. ալկոհոլ), հարեմատուն (<արաբ. հարեմ «արգելված»)⁵, դիվանատուն (<պրսկ. դիվան «ատյան, դատարան, խորհրդարան, արխիվ»)⁶, արևմտ. դարմանատուն (<պահլ. դարման «բժշկություն»:

2 Թ վերջածանցը սովորաբար ընկնում է կալանատուն (<կալանք), արգելատուն (<արգելք), ազոթատուն (<ազոթք), կոատուն (<կուռք), կալվածատուն (<կալվածք), վաճատուն (<վաճք), սանդղատուն (<սանդուղք), զրատուն (<զիրք), որ վկայվել է նաև զրհատուն ձևով (հմմտ. հարսանատուն):

3 Словарь иностранных слов. М., 1986, с. 413.

4 նույն տեղում, էջ 26:

5 նույն տեղում, էջ 111:

6 Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 671:

դեղ»)⁷, փոստատուն (<իտալ. posta «կայարան»)⁸ և այլն⁹:

Կարելի է ներկայացնել, որ բառակազմությունը կատարվում է հիմնականում հայերենի միջոցներով:

Համադրական այս բարդությունների հորերի միջև գոյություն ունի երկու կարգի ստորադասական հարաբերություն¹⁰:

ա) հատկացուցիչ-հատկացյալի, օրինակ՝ աղոթատուն (աղոթքի տուն), մանկատուն (մանուկների տուն), հարսանքատուն (հարսանիքի տուն) և այլն, բ) որոշիչ-որոշյալի, օրինակ՝ վերնատուն (վերին տուն), հոգատուն (հոգե տուն), շքատուն (շքեղ տուն) և այլն:

Հետազոտվող բառերի մեծ մասն առաջացել է հատկացուցիչ-հատկացյալ հարաբերության հիման վրա:

Դեռևս գրաբարում տուն բաղադրիչով բազմաթիվ կազմություններ կայուն բառակապակցության արժեք են ձեռք բերել, ինչպես տուն զանձուց «զանձատուն, զանձարան», տուն մատենագրաց «մատենադարան», տուն խորհրդայ «խորհրդարան», տուն Տեառն «եկեղեցի», տուն շտեմարանաց «շտեմարան» և այլն, որոնց հիման վրա, շարադասության բնական շրջամաբ, ստեղծվել են համադրական կազմություններ՝ տուն զանձուց → զանձատուն և այլն:

Նույն գործոնացր շարունակվել է: Համառ. Ժողովրդական լեզվին բնորոշ կառույցներն ու նույնաբաղադրիչ համադրական բարդությունները՝ մեռելի տուն-մեռելատուն, սգի տուն-սգաատուն, արևմտ. նամակներու տուն-նամակատուն և այլն:

Սակայն միշտ չէ, որ հնարավոր է նկատել բառակերտման նման ուղին:

Ժամանակակից գրական հայերենում, օրինակ, այսօր գործուն են բազմաթիվ կայուն (երկբաղադրիչ և եռաբաղադրիչ) բառակապակցություններ տուն անդամով, ինչպես՝ մշակույթի տուն, շախմատի տուն, հագուստի տուն, կենցաղի տուն, տեխնիկայի տուն, կոշիկի տուն, գրողների տուն, Խճախմբային արվեստի տուն, կամերային երաժշտության տուն և այլն¹⁰, սակայն ինքնին հասկանալի է, որ սրանցից ոչ մեկը թերևս երբևէ չվերածվի համադրական բարդության՝ անբարեհունչ, անհամեմատ երկար ու արհեստական լինելու պատճառով: Սրանք լայն կիրառություն ունեն գրական լեզվում և հենց ներկայիս ձևով են առկա մեր մտապատկերում:

Հարկ է նշել, որ մեր օրերում տեղ-տեղ նման կառույցների ստեղծմանը նպաստել է նաև ռուսերենի համապատասխան կազմությունների պատճենումը (ДОМ ОБУВН «կոշիկի տուն», ДОМ СОЮЗОВ «միությունների տուն», ДОМ ОФУЦЕРА «սպայի տուն» և այլն), սակայն որոշիչն այն է եղել, որ համանման կազմությունների ավանդույթը մեզ փոխանցվել է դեռևս գրաբարից:

Շարահյուսական կապակցությունների համադրման կողքին գոյություն ունի բառակազմության մի այլ ուղի՝ նմանակությունը, համաբանությունը:

Այս դեպքում սովորաբար առաջին բաղադրիչներն արտահայտում են առնչակից հասկացություններ: Այսպես՝ գինեւուն-գութեշքաւուն-օղետուն-ալֆայատուն, նամակատուն-հեռագրատուն, ռստիկանատուն-պարետատուն-պարեկատուն-պահակատուն, վաճառատուն-գրավաճառատուն, խմբագրատուն-հրատարակչատուն և այլն:

⁷ Նույն տեղում, էջ 639:

⁸ The Shorter Oxford English Dictionary (on historical principles). London [1963] p. 1112.

⁹ Որոշ հնագույն փոխառություններ այնպես են մերվել հայերենին, որ այլևս չեն գիտակցվում իբրև այդպիսիք:

¹⁰ Համանման կապակցություններից կազմվել են նաև հապավումներ՝ Հայարատուն (Հայարվեստի տուն), Ժողատուն (Ժողովրդական (ստեղծագործության) տուն), Բաղրատուն (բաղադրական լուսավորության տուն), Ստեղծատուն (սանիտարական լուսավորության տուն):

Հետաքրքրական է, որ երբեմն նորակերտ բառերի առաջին բաղադրիչները հոմանիշներ են, ուստի և միևնույն նշանակություն ունեն բարդություններն ամբողջությամբ: Օրինակներ՝ գերեզմանատուն-շիրմատուն, ցախատուն-փայտատուն, անառակատուն-պոռնկատուն, սայլատուն-կառատուն, ֆանանայատուն-հովվատուն-երիցատուն, մկրտատուն-կն(ն)ատուն, զգեստատուն (ՄԲ, 261)-հանդերձատուն, առանձնատուն-մենատուն, արևմտ. բանտուն-գործատուն-սլախատատուն, ագարակատուն- կալվածատուն և այլն:

Կան նաև հոմանշային զույգեր կազմող բարդություններ, շնայած առաջին եզրերը հոմանիշներ չեն, ինչպես՝ իջևանատուն-կարավանատուն/ֆարավանատուն, ռոբատուն-մանկատուն, թոնրատուն-հացատուն- արևմտ. կրակտուն, սեղանատուն-հուշատուն, մրգատուն-կախսնաատուն, հանրատուն-հանդուրժատուն-սիրատուն և այլն:

Վերջին օրինակը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում հոմանշային շարքերում կարող են ընդգրկված լինել տուն բաղադրիչով բազմաթիվ բառեր, ինչպես՝ «արգանգ»-բրբ. երեխատուն-զավակատուն-սալմնատուն-արևմտ. ծենդատուն (արևել. նշանակում է «ծննդաբերական հիվանդանոց»)-տղատուն (նշանակում է նաև «փեսատուն»), «բանտ»-արգելատուն-կալանատուն-բռնատուն-կապանատուն-ուղրատուն (<ուղղիչ տուն), «հոգեբուժարան, հիմարանոց»-հիմարատուն-ապուշատուն-գծատուն-խելագարատուն-զսպատուն և այլն:

Անհրաժեշտ է նկատի առնել, որ այս բառերը միևնույն արժեքն ու գործածությունն հաճախակիությունը չունեն. այս պարագայում կարևորը փաստի արձանագրումն է:

Կան նաև հականշային զույգեր՝ սակավատուն և բազմատուն (գյուղեր), միատուն և բազմատուն (բույսեր), վերնատուն և ներքնատուն:

Բարդության առաջին բաղադրիչն ըստ խոսքիմասային արժեքի լինում է՝

ա) մեծ մասամբ գոյական՝ դեսպանատուն, դեղատուն, գրատուն, դրամատուն, զանգակատուն, գերեզմանատուն, պահակատուն, ավանդատուն, ռստիկանատուն, սեղանատուն, փռստատուն, հարսանքատուն և այլն,

բ) մասամբ՝ ածական՝ առանձնատուն (<առանձին տուն), հանրատուն (<հանրաշին~), նախատուն (<նախկին~)¹¹, վերնատուն (<վերին~), նույն ձևով՝ միջնատուն, ներքնատուն, մեծատուն (<մեծ տուն ունեցող)¹², սակավատուն (<սակավ տներ ունեցող) և այլն,

գ) բայարմատ՝ վանառատուն, վարժատուն, զսպատուն, պահատուն, կազմատուն, բայ՝ ըմպելատուն,

դ) թվական՝ միատուն, երկտուն կապական բառ՝ առաջտուն:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ «Ա+տուն» կաղապարը հիմնականում «գոյական+տուն», մասամբ նաև «ածական+տուն», երբեմն էլ «բայ (ահիմք)+տուն» մասնակաղապարների միջոցով է իրացվում, և բարդությունը, որպես կանոն, ունենում է գոյականի արժեք (որպիսին է փաստորեն երկրորդ բաղադրիչը՝ տուն), մի քանիսը միայն՝ ածականի՝ սակավատուն, բազմատուն, միատուն, երկտուն, վաչկատուն (գոյ., ած.), մեծատուն (գոյ., ած.):

Կաղապարի համար հիմքային արժեք ունի տուն բառը. այն որոշիչ է նաև իմաստի տեսանկյունից. առաջին բաղադրիչը, ինչպես հուշում են բառերը, միայն կոնկրետացնող, մասնավորող նշանակություն ունի:

Տուն բաղադրիչով բարդությունները քննելիս նկատվում է մի հետաքրքր-

¹¹ Նախ(ա)- բաղադրիչը համանուն ածանցը չէ (հմտ. նախառնելակ, նախաճառք). այն արտահայտում է ճանաչելիս իմաստը:

¹² Գերակշռող բայական իմաստն է՝ «ունեցող», ուստի հոգնակիում ստանում է -ներ մասնիկը (ինչպես նաև գոյականաբար գործածվող ածականները), մնացածը՝ -եր, այսպես՝ մեծատուներ, վաչկառաններ, բայց՝ խաղառներ, ղեղառներ, արևմտ. գործատուներ և այլն:

բրական իրողություն: Մի քանի տասնյակ բարդություններ ունեն իրենց համանիշները՝ անոց (-ոց), արան վերջածանցներով: Այսպես՝ հյուրատուն-հյուրանոց, կառավարատուն-կառավարան, արևմտ. գործատուն-արևել. գործարան, արևել. դեղատուն-արևմտ. դեղարան, գանձատուն-գանձարան, հիվանդատուն-հիվանդանոց, ցախատուն-ցախանոց, ժողովատուն-ժողովարան, դերձակատուն-դերձականոց, արհեստատուն-արհեստանոց, զինատուն-զինանոց-զինարան, գերեզմանատուն-գերեզմանոց¹³ և այլն:

Որոշ բառերում, հատկապես «որևէ հաստատության անձնակազմ» նշանակությամբ հանդես գալիս, տուն բաղադրիչին համարժեք է -ություն վերջածանցը՝ դեսպանատուն-դեսպանություն, հրատարակչատուն-հրատարակչություն, խմբագրատուն-խմբագրություն, կառավարչատուն-կառավարչություն:

Տուն բաղադրիչի նյութական բովանդակությունը զգալիորեն վերացարկվել է, և երբեմն հանդես է գալիս լոկ իբրև տեղի իմաստի արտահայտիչ: Կարելի է ենթադրել, որ նշմարվում է ածանցակերպի միտելու գործընթաց:

Կարևոր նշանակություն ունի նաև փոխակերպումը (հմտ. գործատենդի-գործատուն, հավաքատենդի-հավաքատուն, վաճառատենդի-վաճառատուն):

Մի քանի բարդություններում տուն բաղադրիչը կարելի է որոշ իմաստով դիտել իբրև «թարմատար», քանի որ մեր լեզվում գործածական են դրանց պարզ և ածանցավոր ձևերը (առանց տուն-ի)՝ նույն իմաստով, ինչպես՝ պահեստատուն-պահեստ, հարեմատուն-հարեմ, դիվանատուն-դիվան, լազնատուն-բազին, մեհենատուն-մեհյան, ախոռատուն-ախոռ, հնոցատուն-հնոց, տպարանատուն-տպարան, փռատուն-փռո:

Տուն բաղադրիչի գործածությունն ինչ-որ չափով արդարացվում է, երբ ցանկություն կա ընդգծելու հատկապես շենքի գաղափարը, օրինակ՝ հարեմատուն «հարեմի շենքը»-հարեմ «կանանոց»:

Տուն-ով համադրական բարդություններում նկատվում են իմաստաբանական հետաքրքրական իրողություններ:

Տուն բառի բազմաթիվ իմաստների մի մասը դրսևորվում է հետազոտվող բառերում: Դրանք են՝

ա) «Շենք»՝ կառույց, որ նախատեսված է բնակության համար. կացարան» (բառի հիմնական նշանակությամբ), օրինակ՝ գետնատուն «գետնի» հողի մեջ շինված տուն, խրճիթ, հյուղ», ժայռատուն «ժայռերի մեջ փորված տուն», իշխանատուն «իշխանի տունը», նույն ձևով՝ կալվածատուն «կալվածատիրոջ տունը», եպիսկոպոսատուն «եպիսկոպոսի կացարանը», ձմեռատուն «ձմեռելու տունը. ձմեռանոց» (արևմտ. նաև՝ «շերմոց») և այլն:

բ) «Սենյակ». սեղանատուն և նաշատուն «ճաշասենյակ», գլխատուն «գլուղական տան գլխավոր սենյակը», սառնատուն «այն սենյակը (սովորաբար նկուղային հարկում), որտեղ միշտ սառն է լինում և՛ որտեղ պահում են մթերքները»:

գ) «Շինություն (կամ նրա մի մասը), որ նախատեսված է որևէ բան պահելու համար». զինատուն, ձեռագրատուն, ցախատուն, ավանդատուն. սպասատուն «եկեղեցական զգեստները կամ անոթները պահելու տեղ», մեզատուն և այլն:

դ) «Շենք, որ նախատեսված է տարբեր պաշտոնական հիմնարկությունների գործունեության համար» (նաև՝ հաստատությունն իր անձնակազմով). դեսպանատուն «դեսպանության շենքը, դեսպանի պաշտոնատունը», պարետատուն, պարեկատուն, դիվանատուն «գրասենյակ, քարտուղարություն (որա շենքը)», խմբագրատուն «խմբագրության շենքը», հրատարակչատուն, մաք-

¹³ Բնագրում սրանք երբեմն ունենում են ռեական կիրառություն (կրկնությունից խուսափելու նպատակով). Անհայտ անձանց կողմից պղծվել է ռուսական գերեզմանատունը Ֆերգանայում: Համանման փաստեր եղել են նույնպես Տաշքենդի և Անդիշանի գերեզմանոցներում (Հ, 20. 09. 90):

սատուն Եայն շենքը (և հիմնարկը), որտեղ մաքսերի գանձման գործով են զբաղվում, հեռագրատուն հենոագիր ընդունող և հաղորդող պետական հիմնարկ, վարչատուն Վարչական մարմնի շենքը, ֆազատուն Քաղաքապետարան, դրամատուն Քանկ, պաշտոնատուն Սպաշտոնը կատարելու տեղը և այլն:

Ե) Վենետիկ և վաճառելու տեղ՝ խանութ. գրատուն, կարնատուն, գինե-տուն, գարեջրատուն, նպարատուն, նաև՝ վաճառատուն:

զ) Վարչատանոց՝ ըստ արհեստի տեսակի անվան. լուսանկարչատուն, դերձակատուն (ունի նաև Վաճառութիւն իմաստը), ներկատուն, սալա-տուն, ոսկերչատուն, նաև՝ արհեստատուն:

է) Վերնոթյուն, որ նախատեսված է զանազան այլ նպատակների համար. խաղատուն, աղոթատուն, դերձատուն, հացատուն, կալնատուն, իջե-վանատուն, բնօրհացատուն, կրակատուն, գոհատուն և այլն:

Այստեղ կարելի է առանձնացնել Վենետիկներ պահելու, խնամելու տեղ՝ կառույց, շինության մասն իմաստը՝ աղավետուն, հավատուն, տաւաւաւ-տուն (ՀԱ, 296), գառնատուն, ուլատուն, մեղվատուն, հորթատուն¹⁴, նաև՝ կենդանատուն: Բացառությամբ առաջինի՝ սրանք գրեթե մոռացված կամ խիստ հազվադեպ կիրառություն ունեցող խոսակցական կազմություններ են: Հնդհանրապես կենդանիներ անվանող բառերի հետ տուն-ի բաղադրությունը գրական հայերենի համար սովորական չէ. առավելաբար գործածվում է անոց վերջածանցը՝ խոզանոց, թռչնանոց և այլն:

ը) Վերնոթյան մասն. հանդերձատուն, ջրտուն ճորագացի ստորին հարկը, կախտուն Վերնոթյան Եյն մասը, որտեղ տեղավորված է կախքարը, ծամատուն Վերնոթյան կից շինված բնակելի շենք, զանգակատուն Վերնոթյան տանիքի վրա կամ եկեղեցուն կից շինված՝ զանգակները կախելու հատուկ կառույց:

թ) Վերնոթյան գտնվելու (բայց ոչ տուն). գերեզմանատուն, սալատուն Վտան բակում սալերին հատկացված տեղ, թոփատուն Վերնոթյան թոփ, զա-վակատուն Վարդանդ, ալատուն և այլն:

ժ) Վերնոթյան (տուն), որ հատկանշվում է որևէ բանով. հարսանքատուն, մե-ռելատուն. պատարագատուն, սգատուն, մատաղատուն և այլն:

ժա) Վերնոթյան. ծխատուն Վարդանայի ծուխ հանդիսացող ընտանիք:

ժբ) Վերնոթյանի յուրաքանչյուր լուծը. առաջատուն Վերնոթյանի առջևի լու-ծը, այնուհետև՝ հարսանքուն, ուծտուն, զորտուն, խարզտուն, աթոռտուն, խնձորտուն, մկնտուն, ավելատուն, հորետուն, սածյատուն, մոտտուն (միևնույն լուծը բարբառներում տարբեր կերպ է անվանվում):

ժգ) Վերնոթյանի ամբողջացած մի մասն. կիսատուն Վերնոթյան, երկտուն Վերնոթյան տնից բաղկացած (բանաստեղծություն):

ժդ) Վերնոթյան. վերնատուն (կարող է ընկալվել նաև իբրև Վերնոթյան):

ժե) Վերնոթյան (փոխաբերական իմաստով). ավազակատուն:

Ինչպես հուշում է վերջին բառը, այս խմբավորումը մի շարք բառերի համար որոշ իմաստով պայմանական է: Այսպես՝ գրատուն բառում տուն-ն արտահայտում է պահելու տեղ իմաստը, եթե գործածվում է գրադարան իմաստով, իսկ եթե գրախանութ իմաստով, ապա՝ վաճառելու և գնելու տեղ: Նույն ձևով՝ իշխանատուն Վերնոթյանի տունը և Վերնոթյան ընտանիքը, խորհրդատուն Վերնոթյան սպասների պահասենյակ և Վերնոթյան, սրբա-տուն Վերնոթյան, տաճար և Վերնոթյան սրբություններն ու անոթները պահելու տեղ եկեղեցում, լվացատուն Վերնոթյան շենք կամ տանը կից սեն-յակ, որ հատկացված է լվացք անելու համար և Վերնոթյան սպասարկ-ման հիմնարկություն (արևմտահայերենն այս իմաստը չունի) և այլն:

Հետաքրքրական է, որ իբրև բարդություն առաջին բաղադրիչ հանդես

¹⁴ ԺՀԼՐ-ն նշում է Վերնոթյան արգանդ իմաստով:

դալիս ևս տուն ըստ դրսևորում է բազմաթիվ իմաստներ (գրաբառ և ժամանակակից հայերեն բառերում)՝ «շենք, բնակարան»՝ տնաշինություն, տնակ, տնապան. «ընտանիք»՝ տանեկեց «ընտանիքի ծխատիք քահանա».. «բանաստեղծության բառատող»՝ տանգլուխ «ոտանավորի ամեն տան սկզբում դրվող բառերը», տնաբաժին «տնատող». «սենյակ»՝ տանտեք «վարձով տրվող սենյակի» տան տերը. «հայրենիք»՝ տունդարձ, «հիմնարկություն»՝ տնօրեն «հիմնարկության (կամ ձեռնարկության, ուսումնական հաստատության) վարիչ, ղեկավար»:

Այս դիրքով տուն բառը հանդես է գալիս հետևյալ բառակազմական հիմքերով՝ աճ- (տնտես, տնակ, տնայնագործ, տնարույս և այլն), աւն- (տաներես, տանեկեց). տանու- (տանտեր), տուն- (տունդարձ):

Տուն առաջին բաղադրիչ ունեցող բառերի թիվն անհամեմատ փոքր է հետազոտվող բառերից:

«Ա+տուն» կաղապարով կազմված բարդությունները ծագումով բաժանվում են երեք շերտերի՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար:

1. Գրաբարյան բառաշերտի մեջ են մտնում՝ գանձատուն, հիւստուն, ներհնատուն, աստեղատուն¹⁵, գերեզմանատուն, ներկատուն, իջեւանատուն, սրբատուն, վաչկատուն, կրկատուն, աղօթատուն, վերնատուն, ձմերտուն, ամառա(ս)տուն, ատարատուն «հյուրանոց», տապանատուն և այլն:

2. Միջին հայերենի շրջանից են վկայված՝ գրատուն, գործատուն, աղաւնէտուն, հոգետուն/գաղ(ա)տուն «նորածինների գանգի ոսկրազուրկ մասը», գողետուն «բորոտանոց», դաստուն, քնծանատուն «հնձան», խաւարատուն «խավար տուն», բաժտուն «մաքսատուն», հովատուն (հմմտ. արեւմտ. հովտուն «արեւելյան բաղնիքի զով սենյակ»), իոցտաֆատուն «բուժարան տաք հանքային ջրերի լողանքներ ընդունելու համար» (հմմտ. բրբ. տափտուն «բաղնիք»), բոգատուն, ծխատուն, բազմա(յ)տուն «որտեղ շատ տներ կան»¹⁶ և այլն:

Գրաբար և միջին հայերեն բառերի զգալի մասը փոխանցվել է ժամանակակից հայերենին:

3. Աշխարհաբարյան բառախումբն իր հերթին բազմաշերտ է:

ա) Նրա մեջ մտնում են այն բառերը, որոնք կազմվել են աշխարհաբարի շրջանում և գործածական են հայերենի երկու գրական տարբերակներում (արեւելահայերեն և արեւմտահայերեն), ինչպես՝ սեղանատուն, խաղատուն, դեսպանատուն, մաֆսատուն, խմբագրատուն, հեռագրատուն, գրավատուն, կաթնատուն, ջերմատուն «ջերմոց» և այլն:

բ) Արեւելահայերենին բնորոշ բառեր՝ դեղատուն (արեւմտ. դեղարան), փոստատուն (արեւմտ. նամակատուն), պարեկատուն, կաթսայատուն, ծնընդատուն (արեւմտ. մայրանոց, ծննդանոց), պարետատուն և այլն:

գ) Արեւմտահայերենին բնորոշ բառեր՝ դարմանատուն (արեւել. բուժարան), սափրատուն (արեւել. վարսավիրանոց), հանրատուն (հասարակաց տուն), դրամատուն (բանկ), նամակատուն (փոստատուն), գործարան¹⁷ (գործարան) և այլն:

Հայերենիցում լույս ընծայված բառարաններում տեղ չեն գտել տուն բաղադրիչով արեւմտահայերեն այլ բառեր, որոնք կան (հետեւողական չեն նաև սփյուռքի բառարանագիրները). հրատարակչատուն (արեւել. հրատարակչություն). Հայաստանի մեջ պետական ժողովուրդ ենք: Պետական հրատա-

15 Այս և բրբ. աղկատուն «հարսի տունը» բառերում առաջին բաղադրիչը գրվել է սեռականով. օրինակաբանը ուղիղ ձևն է:

16 Մրանից անկախ ժամանակակից հայերենում կազմվել է բազմատուն բուսաբանական եզրույթը՝ ծաղկավոր բույսեր, որոնք երկսեռ ծաղիկներից բացի ունեն նաև միասեռ ծաղիկները նշանակությամբ:

17 Այս բառն առաջին անգամ վկայվել է միջին հայերենում, ինչպես շատ համանման բառեր, որոնք գործածական են ժամանակակից արեւմտահայերենում:

բաղկադրված են ունենք (ԹԹ, 85), նպարատուն. Դիմել հայ նպարատուններու (Ն, թիվ 2, 1990), ըմպելատուն, ալփուտուն (հմմտ. գիւնտուն, գարեջրատուն). Անպատճառ ամիսը անգամ մը կը քաշվեր գաղտնի ալփուտուններու մեջ (ԶԳ, 380). Փնտռեցի քանի՞նք (բառարանս կ'ըսե՝ ըմպելատուն բանտի մեջ) (ՇՇ, 116):

Գրատուն բառը «գրախանութ» իմաստով սկսել է գործածվել նաև արեւելահայերենում, չնայած գրախանութ բառը դեռևս լիովին տիրապետող է: Վաճառատուն բառն արեւելահայերենում խիստ հազվադեպ է, այնինչ արեւմտահայերենում նրա գործածությունը սովորական է և հաճախ դեպ' հատկապես «մեծ խանութ, առևտրական հաստատություն» իմաստով: Օրինակներ՝ Փողոցներն ու հրապարակները, խանութներն ու վաճառատուները խրճողված էին կիներով և մանուկներով, որոնք կաղանդի գնումներ կկատարեին (ԳԱ, 199): Պզտիկ խանութ մը բացի նախ, հետզհետե զայն վաճառատուների վերածեցի (ՎՄ, ՀԲ, 217):

Հնդհանրապես դժվար է արեւելահայերենին ու արեւմտահայերենին բնորոշ բառերի միջև խիստ սահմանազատում կատարել, քանզի բառակազմական այս կաղապարը համահայերեն է, երկրորդ՝ խիստ գործուն են լեզվական փոխադրեցությունները, երրորդ՝ երբեմն անհնար է լինում որոշել սկզբունադրյալը, քանի որ այս կամ այն բառը կարող է ստեղծված լինել անկախաբար:

Օրինակ՝ նամակատուն արեւմտահայերեն բառը վկայվել է դեռևս 1852 թ. («Մասիս», Պոլիս)¹⁸. Նույն բառը գործածել է նաև Ռ. Պատկանյանը (արդյո՞ք նրանից վերցնելով):

Կամ՝ արեւելահայերենում ունենք գարեջրատուն, դերձակատուն, սափր(շ)ատուն և նման այլ բառերի եզակի կիրառություններ, սակայն դրանով այդ բառերը դեռևս արեւելահայերեն չեն, որովհետև հենց այդ հասկացությունները մեր իրականության մեջ անվանվում են այլ կերպ՝ կաշի արհեստանոց, գարեջրի սրահ, վարսավիճարան, այնինչ արեւմտահայ տարբերակին դրանք ավելի հարազատ են: Օրինակներ՝ Դասախոսութենեն ետք՝ ուսանողներու խումբով մը համալսարանին դիմացի գարեջրատունը մտանք պահ մը (ՎՄ, ԱՕ, 83): ...Զորս չափու վրա պատրաստել կու տար այդ շրջանին լավագույն այրերու հատուկ դերձակատան մեջ (ԶԳ, 178): Ազգային լուրերու կեդրոն էր՝ հայկական թաղին մեջ տարիներ է վեր իր գոյությունը պահող պզտիկ այս սափրատունը (ՎՄ, ՀԲ, 127):

Սակայն լեզվական ամենօրյա փոխադրումների հետևանքով հնարավոր է ավելի արագ և մեծ ծավալի փոխներթափանցում, լեզվական ակնհայտ տարբերությունների աստիճանական վերացում: Այսպես, լեզվական մերձեցման և հայերենի մաքրման նպատակով միանգամայն ճիշտ կլինեին արեւելահայերենում դրամատուն և նպարատուն բառերի գործածությունը օտար բանկ և ունիվերսալ բառերի փոխարեն¹⁹ (հմմտ. դիվանատուն-տախիվ):

Ավելացնենք նաև, որ արեւելյան տարբերակում առանձին բաղադրիչով բարդությունների գործածության շրջանակներն անհամեմատ ավելի մեծ են և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի մեջ՝ կապված նրա ունեցած զարգացման նըպաստավոր պայմանների հետ:

դ) Մի առանձին խումբ են կազմում ծագումով բարբառային բառերը՝ հարկադրված «հարկինքի (կոշունքի)՝ խնջուքի տուն, հարսանքատուն», գաւակատուն, քացանատուն «կաթնատուն», մեռելատուն, ցախատուն, կախատուն, կախանատուն, քոնրատուն, փռշտուն «ալրաղացի քարի շուրջը եղած

¹⁸ Վ. Լ. Աճեմյան. Գրական արեւմտահայերենի ձևավորումը. Երևան, 1971, էջ 197.

¹⁹ Նախանշանները կարելի է տեսնել հայաստանյան մամուլում, երբ հատկապես արտերկրի աղբյուրներից ստացված նյութերը արեւելահայերենի վերածելիս պահպանվում են արեւմտահայերենին հարազատ որոշ բառեր: Օրինակներ՝ դրամատուն (Գ, թիվ 22, 1990), նրատառակատուն (Ու, 21. 09. 90) և այլն:

տարածությունը, ուր նստում է ալյուրի փոշին», փոխնդարում «ծիթհանքի ալն լածինը, որտեղ մաղում են փոխինդը», կամուրջում «չրաղացի վերին երկանաքարի տակ փորված փոս, որի մեջ պինդ հագցվում է կամրջակը», բովտուն «ծիթհանքում քառանկյունի մեծ փոս, որտեղ կտավատն են բո-վում», տանտուն «տան բակում առանձին բաժանմունք, որտեղ թոնիրն է թաղված, կերակուր են եփում, լվացք անում»²⁰, գուլթանի լուծերի անվանում-ները, ակնատուն «կավե կամարածե հենարան թոնրի ակի մոտ՝ վառելիքը վրան հենելու համար» և այլն:

Որոշ բարբառային բառեր գրի ենք առել բանավոր խոսքից՝ հոսատուն «տանի կից կառույց, որտեղ հորերն են գտնվում», հետնտուն «տան վերջին սենյակը», սերմատուն «սերմերի պահեստ» (Աշտարակի շրջան, Սասունիկ), ջոջտուն «հայրական տուն» (Նոր Բայազետ), որոնք չենք գտնում բառա-րաններում:

Բարբառային ծագում ունեցող մի քանի բառեր էլ, չնայած հանդիպում են գրավոր խոսքում, սակայն բառարանային գրանցում չեն ստացել, ինչ-պես՝ բալուրտուն «գլխատուն» (ՀՄՀ, հ. 3, 98), ամբարտուն «հացահա-տիկի պահեստ» (ՎԲ, 430, 129, 1987, թիվ 7, 65):

Գրաբար հուշարձաններում, միջին հայերենի շրջանից վկայվել են տուն բաղադրիչով բարդություններ, որոնց ժողովրդական ծագումն ակնհայտ է, ինչպես՝ տլրատուն/տլրտուն (հմտ. միջին հայ. ալուրտուն), փռատուն²¹ (ՄԶ, 757) և այլն:

Հարկ է նշել, որ ժողովրդական կազմությունները մեծ թիվ են կազմում:

Տուն երկրորդ բաղադրիչով համադրական բարդությունները էապես զանադանվում են իրենց գործածության հաճախականությամբ: Բարձր հա-ճախականություն ունեցող բառերի կողքին (գերեզմանատուն, գրատուն, դես-պանատուն, դեղատուն, գինետուն, գործատուն, վերնատուն և այլն) կան այնպիսիք, որոնք կենսունակ չեն, գործածությունը խիստ հազվադեպ է կամ գրավոր խոսքում հիշատակվել են մեկ-երկու անգամ (հատկապես արհես-տականորեն կազմված լինելու հետևանքով)՝ մնալով լոկ իբրեւ բառարա-նային միավորներ, ինչպես՝ սանդղատուն, տալարատուն, խորտկատուն, շո-րատուն, շոգեկաթսայատուն, սրբագրատուն, տպագրատուն, հաշվատուն, գյուղատուն, բանկատուն, գծատուն, տպավիմագրատուն, ապրանքատուն, պալատատուն, արհայատուն, սառցատուն, պահանջատուն, խոստովանատուն, թեյատուն, նորատուն, հեռախոսատուն, Թեղեցատուն, նվիրատուն, առտ-վածատուն, ամառանցատուն, դատաստանատուն, խոհատուն, վարժատուն, ուսումնատուն, հեշտատուն, հասցեատուն, սիրատուն, էլեկտրալուսանկարչա-տուն և այլն:

Համադրական բարդության «Ա+տուն» կաղապարը գործուն է առավե-լապես աշխարհաբարում (թե՛ արեւելահայերենում, թե՛ արեւմտահայերենում). այն դեռեւս կենսունակ է, ունի նոր բառեր կազմելու ներուժ հնարավորու-թյուններ: Հենց մեր օրերում, օրինակ, ստեղծվեց անուրդատուն (հմտ. անուրդաստան, անուրդատեղի) բառը²². Նա քրիստոսի անուրդատանը իր գնած Վան Գոգի «Գոգիտոր Գաշի դիմանկարով» ապշեցրեց ամբողջ աշ-խարհը (ԵՅ, 25.09.90):

Այսպիսով՝ V դարից (հավանաբար՝ նախագրային շրջանից) գործում է բառակազմական մի կաղապար, որի իրացումները զգալիորեն հարստաց-րել են հայերենի բառապաշարը:

²⁰ Նույնաբաղադրիչ տեսանում կրկնավոր մակրայը չի կապվում իսկական բարդության «Ա+տուն» կաղապարի հետ:

²¹ Լսել ենք Տավուշ-Իջևանում:

²² Հմտ. նաև արեւմտ. անուրդի տուն. Միջազգային արվեստի անուրդի տուն մը վա-հառքի ցանկին վրա նկատված էր Հայաստանի մեկ թանգարանն ... գողցված յուզանկար մը (Պ, 17. 11. 90):

11 «Հանգիստ», № 2

Հ Ա Մ Ա Ռ Ո Ս Ա Գ Ի Ռ Ի Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

- Բուզ. — Փառաոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
 Գ — Գործ (շարաթաթերթ):
 ԳԱ — Գեորգ Աճեմյան, Ակամա ծագածուն և այլ դերասաններ, Պէյրուս, 1968:
 ԾԾ — Երեկոյան Երեան (օրաթերթ):
 ԵԳ — Եգիշէի վասն վարդանայ և Հայոց պատերազմին, Երեան, 1957:
 ՋԳ — Ջարուհի Գալեմբարյան, Օրեր և զեմքեր, Երուսաղէմ, 1965:
 ԹԹ — Թորոս Թորանյան, Վերստին կարդալով Շահան Շահնուրը, Հայկա, 1971:
 ԼԶԳ — Լրարեր հասարակական գիտութիւնների (ամսագիր):
 Մնն. — Գիրք մննդոց, Քննական ընդգիրը, աշխատասիրութեամբ Ա. Ս. Զեյնունի, Երեւան, 1985:
 Հ — Հայաստան (օրաթերթ):
 ՀԱ — Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրութիւն հոլանդացիներ (XVI—XVII դդ.), Երեւան, 1971:
 ՀՍՀ — Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երեւան, 1977:
 ՂՇ — Ա. Ս. Ղազարյան, Գ. Ս. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երեւան, 1981:
 ՄԲ — Մինաս Բժշկեան, Ըանապարհորդութիւն ի լեռնաստան, Վենետիկ, 1830:
 ՄՁ — Միսաիկ Զամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786:
 Ն — Նալապարզ (ամսագիր, Լոս Անջելէս):
 ՇՇ — Շահան Շահնուր, Կրակը կողքիս, Փարիզ, 1973:
 Պ — Պայքար (օրաթերթ, Բոստոն):
 ՍՄ — Սա. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երեւան, 1944:
 ՎԲ — Վ. Բոքյան, Երգարարական մշակույթը Հայաստանում, Երեւան, 1972:
 Վեցօր. — Բարսեղ Կեսարացի, Յազազս վեցաւրեայ արարչութեան, աշխատասիրութեամբ Գ. Մուրադեանի, Երեւան, 1984:
 ՎՄ, ԱՕ — Վահրամ Մամյան, Անկապ օրագիր, Երուսաղէմ, 1968:
 ՎՄ, ՀԲ — Վահրամ Մամյան, Հայու ընկերներ, Երուսաղէմ, 1965:
 Ու — Ուրրաթ (շարաթաթերթ):

СЛОЖНЫЕ СЛОВА СО ВТОРЫМ КОМПОНЕНТОМ -ՏՈՒՆ

Դ. Ս. ГЮРДЖИНЯН

Резюме

В статье исследуются синтетические сложные слова со вторым компонентом *տուն*, которые относятся к словообразовательной модели П (первый компонент) + *տուն* «дом». Насчитывается более 270 таких сложений. Подобные слова засвидетельствованы в первых же письменных источниках V века. Модель более продуктивна в ашхарабаре (как в восточноармянском, так и в западноармянском) и еще имеет потенциальные возможности для образования новых слов. Существенную часть составляют диалектные слова. Модель П + *տուն* реализуется в подмоделях «существительное + *տուն*», а также «прилагательное + *տուն*», «глагольная основа + *տուն*». Сложение в целом имеет значимость существительного. Изучаемые слова в большинстве своем образованы из двух, реже — трех компонентов, которые соединяются в основном с помощью соединительной гласной *ա*. Выделяются два способа образования слов такого типа: а) от соответствующих словосочетаний, б) путем аналогии. Как правило, первый компонент — армянское слово. Слово *տուն* в сложениях употребляется в собственных ему лексических значениях: «жилище», «комната», «здание»; «место (вообще), учреждение», «хранилище» и т. д. Многие из исследуемых слов имеют синонимы с суффиксами *-արան*, *-անոց* (*-ոց*) и другими сложениями с компонентом *տուն*.